



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

<b>ԹԵՄԱ</b>	Ֆինանսական կրթության դասավանդումը դպրոցում
<b>ԱՌԱՐԿԱ</b>	Մաթեմատիկա
<b>ՀԵՂԻՆԱԿ</b>	Լալա Պետրոսյան
<b>ՄԱՐԶ</b>	Շիրակ
<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ</b>	Բավրայի միջնակարգ դպրոց

# Բովանդակություն

Ներածություն-----	3
Նպատակներ և խնդիրներ-----	4
Գլուխ 1	
Բաժին 1.1 Ֆինանսական կրթություն-----	5
Բաժին 1.2 Ֆինանսական բաղադրիչը հանրահաշվի դասագրքերում -----	8
Բաժին 1.3 Փող և ֆինանսական հաստատություններ-----	9
Գլուխ 2	
Բաժին 2.1 Բյուջե-----	12
Բաժին 2.2 Ի՞նչ է բյուջեն-----	12
Բաժին 2.3 Ինչու՞ կազմել բյուջե-----	13
Բաժին 2.4 Ինչպե՞ս վարել բյուջեն-----	14
Օրինակներ-----	15
Եզրակացություն-----	18
Գրականություն-----	19

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2015 թվականից ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության(ՖԿԱՌ) ներքո մեկնարկել է <<Ֆինանսական կրթությունը դպրոցում>> ծրագիրը, որի նպատակն է սովորողների շրջանում ձևավորել անհրաժեշտ նազագույն ֆինանսական գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք՝ խթանելով պատասխանատու ֆինանսական որոշումների կայացումը: Ֆինանսական կրթության բաղադրիչը ինտեգրվում է հետևյալ չորս առարկաներում՝

- Ես և շրջակա աշխարհը (2-ից 4-րդ դասարաններ)
- Մաթեմատիկա (2-ից 6-րդ դասարաններ)
- Հասարակագիտություն (8-ից 11-րդ դասարաններ)
- Հանրահաշիվ (7-ից 11-րդ դասարաններ)

Ֆինանսական կրթությունը ներառում է յոթ թեմատիկ ոլորտներ.

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում
2. Անձնական բյուջեի կառավարում
3. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում
4. Պարտքերի կառավարում
5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն
6. Անձնական իրավունքների պաշտպանություն
7. Ֆինանսական խարդախությունների և զեղծարարությունների կանխարգելում և դրանց պաշտպանություն

# ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԽՆԴԻՐՆԵՐ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Իմանալ ի՞նչ է փողը, ինչպե՞ս է օգտագործվում, ինչո՞ւ է անհրաժեշտ
- Կարողանալ կազմել և վերահսկել անձնական բյուջեն
- Գիտակցել ֆինանսների կառավարման գործընթացում ողջ ընտանիքի ներգրավման անհրաժեշտությունը
- Ձևավորել ֆինանսապես գրագետ անձ
- Նպաստել անձի ինքնավստահության զարգացմանը՝ հիմնավոր հաշվարկներ և համակողմանի վերլուծություններ կատարելու համար

## ԽՆԴԻՐՆԵՐ

- Բացահայտել փողի դերը անհատի կյանքում
- Պարզել, ինչո՞ւ է անհրաժեշտ վարել անձնական բյուջեն
- Պարզել ինչո՞ւ է անհրաժեշտ դպրոցում ֆինանսական կրթության դասավանդումը
- Կարողանալ ըստ բյուջեի հաշվել եկամուտների և ծախսերի հանրագումարը և ըստ այդմ դուրս բերել դրական կամ բացասական մնացորդը

# ԳԼՈՒԽ 1

## 1.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական խնդիրների, որոնց թվում առավել մեծ նշանակություն ունեն անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ խնդիրները, որոնք արդյունավետ լուծելու համար պետք է ունենալ ֆինանսական գրագիտության բավարար մակարդակ: Ուստի վերջին ժամանակներում ֆինանսական կրթության նկատմամբ ՀՀ կառավարության ցուցաբերած ուշադրության արդյունքում ստեղծվել է աշխատանքային խումբ, որը «<մշակել է մաթեմատիկա և հանրահաշիվ առարկաներում ինտեգրվող ֆինանսական կրթության չափորոշիչի և ծրագրի նախագիծ>>, ինչը ներկայացված է աշխատանքում:[1 5

Ֆինանսական հարցերի շնորհիվ կամրապնդվի մաթեմատիկական կրթության բովանդակության կապը իրական կյանքի հետ , մաթեմատիկական հասկացությունները կփոխադրվեն կիրառական ոլորտ և կնպաստեն սովորողների հետաքրքրասիրության առաջացմանը: «<Ֆինանսական կրթությունը դպրոցում>> ծրագիրն ունի տաս պատվիրաններ .

1.Ֆինանսական առողջություն - մենք բոլորս անկախ մեր տարիքից առնչվում ենք ֆինանսական աշխարհի հետ, ուստի կարևոր է ձևավորել անհրաժեշտ գիտելիք, հմտություն, վերաբերմունք, վարքագիծ, որոնք կնպաստեն անձի գիտակցված և պատասխանատու ֆինանսական որոշումների կայացմանը, ուրեմն լինենք ֆինանսապես առողջ:



2.Փողը պաշտամունք չէ - փողը նպատակ չէ, պետք չէ փող ֆետիշացնել:Սովորողների մեջ անհրաժեշտ է ձևավորել վերաբերմունք, որ փողը գործիք է նպատակներին հասնելու և ցանկացած անկանխատեսելի իրավիճակ հաղթահարելու համար:



3. Պատասխանատու որոշումներ - սովորողները պետք է հասկանան, որ ֆինանսական որոշումներում չկան բացարձակ ճշմարտություններ, պետք է ձևավորել ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը և գիտակցել, որ ամեն ինչ կախված է անձից և իրավիճակից

4. Ակտիվ ուսուցում - սովորողներին հասանելի դարձնել այն գաղափարը, որ ֆինանսական աշխարհն ամեն օր զարգանում է, շատ կարևոր է ուսուցման և իրական կյանքի միջև կապը՝ խաղերի, խմբային աշխատանքների, ֆինանսական կազմակերպությունների այցելությունների միջոցով թարմացնել ֆինանսական գիտելիքները:



5. Շարունակականություն - երկրորդից տասնմեկերորդ դասարաններում ֆինանսական կրթության ներառումը պետք է կրի շարունակական բնույթ ողջ կյանքի ընթացքում:

6. Ինտեգրում - Ֆինանսական կրթությունը ինքնին առարկա չէ, ստորոդները պետք է հասկանան, որ առարկայական և ֆինանսական կրթական նպատակների միջև կարևորվում է իտեգրումը:

7. Համագործակցություն - շատ կարևոր է «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա» , «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն» ուսուցիչների համագործակցությունը: Սովորողները պետք է հասկանան որ ֆինանսական կրթության առումով սրանք փոխլրացնում են միմյանց և ապահովում գիտելիքի սիներգիկ զարգացում:



8.Նվազագույն կոմպետենցիաներ - Ֆինանսական կրթությունը դպրոցում առաջադրում է նվազագույն անհրաժեշտ կարողություններ, որոնք օգտակար են ոչ միայն սովորողների այլ նաև նրանց ընտանիքների համար:

9.Ազդեցության էֆեկտ - Ուսուցիչը՝սովորող, սովորողից՝ընտանիք. Սովորող-ուսուցիչ-ծնող արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի ֆինանսական ուակությունների զարգացումը ապահովել հասարակության տարբեր շերտերում



10.Աստիճանական աճ - սովորողներին և ընդհանրապես ֆինանսական գիտելիքները պետք է փոխանցել կաթիլ-կաթիլ՝ պարզից անցնելով բարդին: Անհրաժեշտ է, որ մատուցվող տեղեկատվությունը տրամադրվի տարիքին համապատասխան:



# 1.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

## ԲԱՂԱԴԻՒՉԸ

## ՀԱՆՐԱՀԱՇՎԻ

Ֆինանսների վերաբերող գիտելիքը առաջին անգամ հանդես է գալիս հանրահաշվի դասագրքերում <<Հանրահաշվի լեզուն>> բաժնում: Այստեղ երկրաչափական և ֆիզիկական մեծությունների շարքում ներմուծվում են նաև տնտեսագիտական մեծություններ՝ ապրանքի գինը և տոկոսադրույքը: Այս փուլում նշված հասկացությունները ներմուծվում են նկարագրական եղանակով. <<Մեր գործածության համար անհրաժեշտ իրերն ու առարկաները, խանութում և շուկայում վաճառվող ապրանքը ունեն իրենց գինը: Ապրանքի գինը այդ ապրանքը բնութագրող կարևոր մեծություն է: Այն տնտեսագիտության մեջ ուսումնասիրվող մեծություն է: Տնտեսագիտության մեջ ուսումնասիրվող մյուս կարևոր մեծությունը տոկոսադրույքն է: Տոկոսադրույքով են բնութագրվում բանկերի կողմից ավանդի դիմաց տրվող վարկերը:>> [5 էջ 40]: Ֆինանսական գիտելիքը հանդես է գալիս որպես մեծությունների համեմատության միջոցով մեր կենցաղը կազմակերպելու կարևոր գործիք [5 էջ 45]: Տարբեր սեռերի առարկաների համեմատության համար հայոց լեզվում գործածվող բառաշարքում բերվում են նաև գների և տոկոսադրույքների համեմատության համար գործածվող բառերը, որոնք տրվում են հետևյալ կերպ.

մեծությունը	առարկան	մեծ է	փոքր է
գին/արժեք	ապրանք	թանկ է	էժան է
տոկոսադրույք	վարկ	բարձր է	ցածր է

Գնի և տոկոսադրույքի հասկացությունները օգտագործվում են ինչպես գումարման այնպես էլ հանման կիրառություններին նվիրված նյութերում: Այստեղ առարկաների փոփոխությունները ցույց տալու համար ավելացնել (պակասեցնել) բառին զուգընթաց հայոց լեզվում գործածվող բառերի շարքում անդրադարձ է կատարվում գնին և տոկոսադրույքին [5 էջ 68],[5 էջ 116].

Առարկայի մեծությունը	<<Ավելացնել>> բառի փոխարեն գործածվող բառեր
Գին	Թանկացնել, մեծացնել, բարձրացնել
Տոկոսադրույք	Մեծացնել, բարձրացնել



Առարկայի մեծությունը	Պակասեցնել բառի փոխարեն գործածվող բառերը
Գին	Քչացնել, իջեցնել, էժանացնել
Տոկոսադրույք	Իջեցնել, նվազեցնել

### 1.3 ՓՈՂ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ապրանք կամ ծառայությունների փոխանակման գործընթացի անհարմարություններից խուսափելու համար աշխարհի բոլոր երկրները ստեղծել են իրենց փողային համակարգը կամ օգտվել որևէ այլ երկրի փողային համակարգից: Փողը բնորոշելիս տնտեսագետները հաճախ ասում են. «Փողն այն է, ինչ որ փողն անում է >>: Այսինքն փողի էությունը դրսևորվում է նրա կատարած գործառույթներում: Փողի գործառույթներն են.

- Փողը որպես փոխանակման միջոց
- Փողը որպես կուտակման միջոց
- Փողը որպես արժեքի չափ

Փողի առաջարկը տնտեսության մեջ առկա օրինական վճարման միջոցների ամբողջությունն է: Այն կարելի է բաժանել երկու մասի՝ սկստիվ և պասիվ:

Սկստիվ - ներառում է այն դրամամիջոցները, որոնք անմիջականորեն սպասարկում են ապրանքների և ծառայությունների շրջանառությունը:

Պասիվ - ընդգրկում է դրամական խնայողությունները, բանկային հաշիվների մնացորդները, որոնք տեսականորեն անհրաժեշտության դեպքում նույնպես կարող են ծառայել որպես վճարման միջոց:



Փողի առաջարկի մեջ մտնող տարբեր բաղադրիչներն այլ կերպ կոչվում են փողի ագրեգատներ, որի թիվը տարբեր երկրներում, ելնելով տնտեսական զարգացման մակարդակից և կուտակված ավանդույթներից տարբեր է: ՀՀ-ում առանձնացվում են փողի հետևյալ ագրեգատները՝ M1, M2, M2x:

M1-ը դրամային նեղ առաջարկն է, ներառում է շրջանառության մեջ առկա կանխիկ դրամը, ճամփորդական չեկերը, ցպահանջ ավանդները և այլ չեկային ավանդներ:

M2-ը դրամային լայն առաջարկն է: Ագրեգատը ընդգրկում է M1-ը, ինչպես նաև խնայողական ավանդային սերտիֆիկատները, դրամաշուկայի հաշիվները, ավանդները և հեշտությամբ իրացվելի այլ ակտիվները:

M2x-ը փողի լայն առաջարկն է: Իրենից ներկայացնում է M2-ը՝ գումարած արտարժույթային բոլոր ավանդները:

Այս գործառնությունները ցույց են տալիս, որ փողը շարունակում է կատարելագործվել, քանի որ մարդիկ ձգտում են ավելի հարմար եղանակներ գտնել միմյանց հետ փոխանակության մեջ մտնելու համար: Բոլորովին կարևոր չէ, թե փողն ինչ ձևով է հանդես գալիս, այն միշտ փոխանակման միջոց է, կուտակման միջոց և արժեքի չափ:

Փողի առաջարկի մեծ մասը գոյանում են այնպիսի ֆինանսական հաստատություններում ինչպիսիք են բանկերը: Բանկային համակարգը տվյալ երկրում գործող բանկերի ամբողջությունն է: Յուրաքանչյուր երկիր, ստեղծելով փողային համակարգ, իր կենտրոնական բանկին լիազորություններ է տրամադրում իրականացնելու դրամավարկային քաղաքականություն, կազմակերպելու և վերահսկելու երկրի բանկային համակարգի գործունեությունը:

Շրջանառության մեջ գտնվող փողի քանակը կարգավորում է երկրի կենտրոնական բանկը, իսկ առևտրային բանկերն իրենց գործարքների միջոցով ավելացնում է փողի առաջարկը :

Եթե փոխանակության ժամանակ փողը հանդես է գալիս որպես յուրահաստուկ ապրանք որի միջոցով մնացած ապրանքները փոխանակվում են միմյանց հետ ապա այդ ապրանքների արտադրության ավելացման հետ պետք է ավելանա նաև փողի քանակը: Վերը նշվածների միջև քանակական կապը առաջինը ներկայացրել է Իրվինգ Ֆիշերը: Նա այս կապը արտահայտել է հետևյալ բանաձևով.

$$MV=PT, \text{ որտեղ } M\text{- փողի առաջարկ}$$
$$V\text{-փողի շրջանառության արագություն}$$
$$P\text{-ապրանքների և ծառայությունների միջին գին}$$
$$T\text{-տնտեսության մեջ կատարվող գործարքների քանակ}$$

Օրինակ 1 . Ենթադրենք դասարանում սովորում է 20 աշակերտ,որոնցից յուրաքանչյուրը մեկական ապրանք է արտադրել միմյանց հետ փոխանակելու համար: Ուսուցիչը դրանց փոխանակությունը կազմակերպելու համար առաջին աշակերտին վճարում է 500 դրամ և գնում է նրա արտադրանքը, և այդպես շարունակ բոլոր աշակերտներն իրենց ապրանքը վաճառելուց հետո գնում են մեկ ուրիշի արտադրանքը:Նշանակում է կվաճառվի 20 ապրանք, որոնցից յուրաքանչյուրի գինը 500 դրամ է: Քանի որ 500 դրամը 20 անգամ պտույտ կատարեց , ուրեմն  $MV=500 \times 20=10000$  դրամ: Գործարքների քանակը՝  $T$ -ն, նույնպես 20 է, ուրեմն  $PT=10000$ դրամ: Քանի որ  $MV=PT$ ,ուստի  $P=MV/T$ , այսինքն եթե  $V$ -ն և  $T$ -ն հաստատուն մնան, փողի առաջարկի ցանկացած փոփոխություն ուղղակիորեն կազդի գնի վրա : Փողի առաջարկի ավելացումը չի հանգեցնի գների աճի, եթե ապրանքների և ծառայությունների արտադրությունը նույն չափով ավելանա:

Փողի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ ձևավորվում է փողի գինը՝ տոկոսադրույքը: Եթե փողի առաջարկը գերազանցում է փողի պահանջարկին ապա տոկոսադրույքը իջնում է և ընդհակառակը՝ եթե փողի պահանջարկը գերազանցում է առաջարկին, ապա տոկոսադրույքը բարձրանում է: Փողի քանակի փոփոխությունը առաջ է բերում նաև փողի արժեքի փոփոխություն: Փողի արժեքի նվազումը՝ նրա գնողունակության անկման երևույթը, սերտորեն կապված է ինֆլացիայի հետ:

## **ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ**

<<Երբ ես քո տարիքին էի, նույն փողով ավելի շատ բան կարելի էր գնել, քան հիմա:Նրբերշիկով բրդուճները, շոկոլադե սալիկները և բնական հյութերն արժեին ընդամենը 50 դրամ: Այժմ 50 դրամո ոչինչ չես գնի: Իսկ 200 դրամով,դե, կարող էիր նույնիսկ կինո գնալ կամ 4 հաց գնել: Դրանք հին, լավ ժամանակներ էին:>> Առավել մանրամասն տես՝ [2էջ 157-172]

## ԳԼՈՒԽ 2

### 2.1 ԲՅՈՒՋԵ

Կառավարեք ձեր փողը, որպեսզի փողի պակասը չկառավարի ձեզ: Հայաստանի բնակչության մեծամասնությունը կարևորում է բյուջեի պլանավորումը, սակայն 1/3-ից ավելին գործնականում չի պլանավորում: Բյուջեի ճիշտ կառավարման հմտությունը հնարավորություն կտա հեշտորեն հաղթահարել ֆինանսական բարդ իրադրությունները: Շատ կարևոր է արդյունավետ կառավարել գումարները և հասնել ցանկալի նպատակներին:

### 2.2 ԻՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն ծախսերի և եկամուտների հաշվեկշիռն է: Ընտանեկան կամ անձնական բյուջեն ցույց է տալիս, թե որքան գումար եք ստացել, ինչքան փող է ծախսվել որոշակի ժամանակահատվածում: Այն կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով. մի կողմում նշում ենք եկամուտները, մյուսում՝ ծախսերը:

### Օրինակ 2

Եկամուտ	Գումար	Ծախս	Գումար
Աշխատավարձ	80 000	Մնունդ	40 000
Կրթաթոշակ	5 000	Տրանսպորտ	34 000
Փոխանցում արտերկից	42 000	Առողջություն	26 000
Թոշակ	28 000	Կոմունալ վճարներ	35 000
Ընդամենը	<b>155 000</b>	Ընդհամենը	<b>135 000</b>

Մնացորդ

20 000

## 2.3 ԻՆՉՈ՞Ւ ԿԱԶՄԵԼ ԲՅՈՒՋԵ

Բյուջեն օգնում է առանձնացնել կարևոր ծախսերը, որոնք կապված են կարիքների հետ, պակաս անհրաժեշտներից՝ պարզապես ցանկություններից: Հստակ տեսնելով կատարված ծախսերը՝ հեշտորեն կարելի է տարանջատել առաջնային ծախսերը և կրճատել երկրորդայինները: Անկանխատեսելի դեպքերին պատրաստ լինելու համար հարկավոր է ամեն ամիս խնայել եկամտի 10 տոկոսը՝ անմիջապես գումարը ստանալու պես:

$$\text{ԵԿԱՄՈՒՏ} \ 100\% - \text{ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ} \ 10\% = \text{ԾԱԽՍ} \ 90\%$$

Բյուջետավորումը նպատակներին հասնելու օգտակար գործիք է: Անկախ եկամուտների չափից՝ նպատակին հասնելու համար կարող է պահանջվել որոշակի մեծ գումար: Բյուջետավորումը օգնում է պահպանել ֆինանսական կարգապահությունը և կուտակել անհրաժեշտ գումար:[6]

## 2.4 ԻՆՉՊԵՍ ՎԱՐԵԼ ԲՅՈՒՋԵՆ

Շատ կարևոր է բյուջեի վերահսկումը: Յուրաքանչյուրը կարող է ընտրել բյուջեի վերայսկման իր տարբերակը: Ճգնաժամային կառավարմամբ զբաղվող ընկերությունների կողմից կատարված ուսումնասիրությունները պարզել են, մեր եկամտի 20 տոկոսից ավելին ծախսվում է ոչ այնքան անհրաժեշտ իրերի գնմանը, որի արդյունքում զրկվում ենք մեր առաջնային նպատակների իրագործումից, ուստի կարևոր է իմանալ.

- ? Որտեղից է գալիս եկամուտը → Գրանցել եկամուտները
- ? Ուր են գնում փողերը → Գրանցել ծախսերը
- ? Որքան է կազմում ընտանեկան մնացորդը → Հավասարակշռել եկամուտներն ու բյուջեի ծախսերը

Արդյունավետ բյուջե կազմելու համար 3 խորհուրդ

Գրիչն ու բյուջեի վարման գրքույկը միշտ ձեռքի տակ պահիր: Գրանցիր յուրաքանչյուր ծախս կատարման պահին: Եթե չի ստացվում երեկոյան լրացրու օրվա ծախսերը: Գիտնականները ասում են , որ երբ 21 օր շարունակ նույն բանն ես անում, այն դառնում է սովորություն: Երեքից տասներկու ամիս հետո պարզ կդառնա ծախսերի թույլ կողմերը և հնարավորություն կունենաս շտկել դրանք:

Ֆինանսների կառավարման մեջ ներգրավիր ողջ ընտանիքին: Օրինակ՝ խնդրիր երեխային հիշեցնել ձեզ գնված ապրանքների գները: Ընտանիքով ամփոփիր ստացված արդյունքը:

Խանութ գնալիս նախապես կազմիր գնումների ցուցակ և փորձիր չչեղվել դրանից: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այս դեպքում կարող ես խնայել քո գումարի 23-30 %-ը:

Այս ամբողջ տեղեկատվությունը կարևորագույն գործոն կարող է հանդիսանալ սովորողների ֆինանսական գրագիտությանը նպաստելու համար: Օգտագործելով մաթեմատիկայի կրթական հսկայական ներուժը հնարավորություն կստեղծվի բացահայտել ուսումնական առարկայի կիրառական նշանակությունը՝ ապահովելով կրթության բովանդակության կապը սովորողների կրթական կարիքների հետ:

Ֆինանսական իրադրությունը ճիշտ դիտարկելու համար քննարկենք ուսուցանող խնդիրների նմուշ-օրինակներ.

### Օրինակ 3

Մաթեմատիկական տեքստային և հաշվողական խնդիրների լուծում:  
(Բյուջե) Հիմնարկի հաստիքացուցակն ունի հետևյալ տեսքը

Պաշտոն	Հաստիք	Աշխատավարձ-դրամ
Տնօրեն	1	400 000
Հաշվապահ	1	270 000
Բաժնի վարիչ	3	250 000
Գլխավոր մասնագետ	3	200 000
Մասնագետ	5	150 000
Գործավար	2	100 000

Տնօրենն առաջարկում է նոր հաստիք՝ խորհրդատու, որի աշխատավարձի չափը որոշվում է բոլոր աշխատողների բնութագրիչ ցուցանիշներից մեկով կամ ըստ միջին թվաբանականի կամ ըստ մոդայի կամ ըստ մեդիայի: Դուք ո՞ր ցուցանիշն եք ընտրում բարձր աշխատավարձ ունենալու համար:[3էջ 23]

**Լուծում.** Եթե աշխատավարձի չափը որոշվի ըստ միջին թվաբանականի, ապա արդյունքը կլինի հետևյալը.


$$(1 \times 400,000.00 + 1 \times 270,000.00 + 3 \times 250,000.00 + \dots) / 15 = 198,000.00$$

Եթե աշխատավարձի չափը որոշվի ըստ մոդայի (առավել կրկնվող տվյալի), ապա արդյունքը կլինի 150,000.00:

Եթե աշխատավարձի չափը որոշվի ըստ մեդիայի, ապա արդյունքը կլինի 200,000.00:  
Այսպիսով, բարձր աշխատավարձ ունենալու համար պետք է ընտրել մեդիայի ցուցանիշը:

#### Օրինակ-4

(Բյուջե) Օգտագործելով ներկայացված տվյալները՝ կազմել ուղիղ և հակադարձ (դիագրամ պատկերելու կամ դիագրամից օգտվելու) խնդիրներ ընտանեկան բյուջեի վերաբերյալ.[3էջ 22]

ԾԱՌՄԵՐ	ԳՈՒՄԱՐ (դրամ)	ՏՈԿՈՍՆԵՐ	ԴԻՍԿՐԱՄ
Մնունդ	90,000.00	45%	
Կոմունալ ծախսեր	40,000.00	20%	
Հագուստ	30,000.00	15%	
Տնտեսական ծախսեր	8,000.00	4%	
Տրանսպորտ	12,000.00	6%	
Խնայողություն	20,000.00	10%	

Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերն ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակում ներկայացված տվյալներից՝ գտնել, թե որքա՞ն գումար են հատկացնում Արամի ընտանիքում սննդի, կոմունալ ծախսերի, հագուստի, տնտեսական ծախսերի և տրանսպորտի վրա և որքա՞ն խնայողություն են կատարում:

**ՀԱԿԱԴԱՐՁ ԽՆԴԻՐ** Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերն ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակից, ներկայացված ծախսերն արտահայտել տոկոսներով և կազմել համապատասխան շրջանաձև դիագրամը:

**(Գնումներ)** Խանութում ապրանքի գինը նախ իջեցրին 10 տոկոսով, իսկ հետո նոր գինը բարձրացրեցին 10 տոկոսով: Արդյունքում թանկացա՞վ, թե՞ էժանացավ ապրանքը:

Դիտարկենք նաև հակառակ դեպքը, երբ սկզբում գինը բարձրացնում են, հետո՝ իջեցնում: Ստացված արդյունքների հիման վրա եզրակացություններ արեք:[3 էջ22]

**Լուծում.** Նախքան խնդրի լուծումը, հետաքրքիր է իմանալ աշակերտների ինտուիտիվ պատասխանները, ապա կարծիքներն ընդհանրացնելուց հետո նոր անցնել խնդրի լուծմանը: Քանի որ խնդրի պատասխանը կախված չէ ապրանքի գնից, կարող ենք ներմուծել անհայտ կամ առավել մատչելի լինելու համար ընտրել որևէ գումարային չափ: Ենթադրենք ապրանքի սկզբնական գինը 100 միավոր է:

Արդյունքում ստացվում է.



Ապրանքի գինը 10%-ով բարձրացավ, ապա 10%-ով իջեցնելուց հետո	Ապրանքի գինը 10%-ով իջեցնելուց, ապա 10%-ով բարձրացնելուց հետո
$100 \times (1 + 10/100)(1 - 10/100) = 99$ միավոր	$100 \times (1 - 10/100)(1 + 10/100) = 99$ միավոր

Արդյունքում տեսնում ենք, որ երկու դեպքում էլ նույն գինն է ստացվում, ավելին՝ ապրանքի գինը երկու դեպքում էլ իջնում է:

Պատասխան՝ էժանացավ:

**Օրինակ-5** (Գնումներ, պարտք) Խանութում ապառիկ, առանց կանխավճարի վաճառվում է 279,000.00 ՀՀ դրամ արժողությամբ համակարգիչ՝ պայմանով, որ պարտքը պետք է փակվի 9 ամսվա ընթացքում: Շուշանը գիտեր, որ խելամիտ կլինի, եթե ամսական պարտքը չգերազանցի եկամտի 30%-ը: Հարմա՞ր է նրան գնել համակարգիչը, եթե իր եկամուտը ամսական կազմում է 110,000.00 ՀՀ դրամ:[3էջ 22]

**Լուծում.** Շուշանը յուրաքանչյուր ամիս պետք է վճարեր  $279,000.00/9 = 31,000.00$  դրամ: Նրա եկամտի 30%-ը կազմում է  $110,000.00 \times 30/100 = 33,000.00$  դրամ: Քանի որ  $31,000.00 < 33,000.00$ , ուրեմն Շուշանին հարմար է գնել համակարգիչը:

**Օրինակ-6** (Գնումներ, արտարժույթ)Զբոսաշրջիկներից մեկն ուներ 2, իսկ մյուսը 3 միանման բլիթներ: Ուտելիս նրանց միացավ երրորդը, եվ նրանք միասին հավասարաչափ կերան այդ 5 բլիթները: Հեռանալիս երրորդ զբոսաշրջիկն իր կերածի համար սովեց 100 ռուբլի: Երկու զբոսաշրջիկներն այդ գումարը նախ արդար բաժանեցին միմյանց միջև, այնուհետև փոխանակեցին դրամով:Քանի դրամ ստացավ նրանցից յուրաքանչյուրը, եթե մեկ ռուբլու փոխարժեքն էր 8 դրամ:

**Լուծում.** Երեք զբոսաշրջիկներից յուրաքանչյուրը կերել է 5/3 բլիթ: Երրորդ զբոսաշրջիկը 1-ինի հաշվին կերել է  $2 - 5/3 = 1/3$  բլիթ, իսկ 2-րդի հաշվին՝  $3 - 5/3 = 4/3$  բլիթ, հետևաբար 100 ռուբլին առաջին և երկրորդ զբոսաշրջիկների միջև պետք է բաժանել 1:4 հարաբերությամբ: Ուրեմն առաջին զբոսաշրջիկն ստանալու է  $100 \times 1/5 = 20$  ռուբլի, իսկ երկրորդը՝ 80 ռուբլի: Այդ գումարը դրամով կլինի. Առաջինի ստացածը՝  $20 \times 8 = 160$  դրամ  
Երկրորդի ստացածը՝  $80 \times 8 = 640$  դրամ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձերը և հետազոտությունները ցույց տվեցին որ արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ, անկախ իր կամքից առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական խնդիրների հետ: Այստող հասկապես մկենսական մեծ նշանակություն են իրենցից ներկայացնում անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրները: Դրանք արդյունավետ լուծելու համար պահանջվում է ունենալ ֆինանսական գրագիտության բավարար մակարդակ, որը կկարողանանք ձեռք բերել նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ: Ֆինանսական կրթության ծրագրերը, լինելով ողջ կյանքի ընթացքում անձի համապիտանի կարողությունների ձևավորման միջոց, վերաբերում են հանրության բոլոր անդամներին և աստիճանական զարգացում են ունենում որպես շարունակական գործընթաց: Այս գործընթացի առանցքային և հիմնական օղակը հանրակրթական դպրոցն է, որտեղ կարևորվում է անձնական ֆինանսները կառավարելու սովորույթը ներդնել անձի զարգացման վաղ տարիքից, այն դարձնել կենսկերպի անբաժանելի մաս: Ֆինանսական բաղադրիչի վերաբերյալ թերի կամ բացակայող պատկերացումները հանգում է նրան, որ աշակերտները դպրոցն ավարտելիս չեն կարողանում կայացնել պատասխանատու որոշումներ իրենց անձնական ֆինանսների վերաբերյալ հետդպրոցական կյանքում այդ բացը լրացնելը լուրջ դժվարությունների առաջ է կանգնեցնում անձին: Ֆինանսական բավարար գիտելիքները խթան են հանդիսանում ուսուցչից աշակերտ, աշակերտից ծնող փոխհարաբերություններում ֆինանսական գրագիտություն բարելավելու համար, ստեղծվում է բարենպաստ միջավայր, դրական վերաբերմունք անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ ֆինանսական հարցերի ամրապնդում: Փողի մասին լիարժեք գիտելիքները կապում են իրական կյանքը մաթեմատիկական կրթությանը: Մենք բացահայտեցինք բյուջեն և բնույթի վարման ձևերը: Այն ֆինանսական գրագիտության զարգացմանը, ֆինանսապես գրագետ անձի ձևավորման կարևոր նախադրյալ է, որը հնարավորություն տվեց պլանավորել բյուջեն՝ եկամուտները, ծախսերը, խնայողությունները: Պարզեցինք անձնական բյուջեի վրա ազդող ռիսկերը՝ գնաճ և փոխարժեք, որոնց դերը զգալի է անձնական ֆինանսների կառավարման վրա: Հաշվարկների կատարմամբ հնարավորություն ստեղծվեց արդյունավետ որոշումներ կայացնել պարտքերի կառավարման, խնայողությունների և ներդրումների ոլորտում: Տեղեկացված լինելը և գիտելիքների պաշարներով ծանրաբեռնվածությունը հնարավորություն կտա գնահատելու գնաճի և փոխարժեքի փոփոխության ազդեցությունը անձնական ֆինանսների վրա: Եկեք լինենք ֆինանսապես գրագետ, առողջ և պատասխանատու անձ:

## Գրականություն

1. Հակոբյան Ս. Է., Մաթեմատիկայի դասըթացում ֆինանսական կրթության ինտեգրման հիմնահարցի մասին: Մաթեմատիկան դպրոցում, 2, 2017 թ.
2. Հայաստանի պատանեկան նվաճումներ <<Տիգրան Մեծ>> 2004թ.
3. Մաթեմատիկան դպրոցում թիվ 1 (109) 2017թ.
4. Մաթեմատիկան դպրոցում թիվ 3 (111) 2017թ.
5. Միքայելյան Հ. Ս., Հանրահաշիվ: Հանրակրթական դպրոց 7-րդ դասարանի դասագիրք, Էդիտ Պրինտ, Երևան, 2006թ.
6. [ABCfinance](#)